



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2022 թվականի թիվ 54-Ա
ք. Երևան

ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՈՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 14-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի հունիսի 24-ի թիվ 01/11.1/3708-2021, հուլիսի 23-ի թիվ 01/11.1/4303-2021 և օգոստոսի 10-ի թիվ 01/11.1/4556-2021 գրությունները, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի մարտի 24-ի թիվ 43-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. 2022 թվականի ապրիլի 21-ին հայտարարել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Սյունիքի մարզի տարածքում սփռման մրցույթ:

2. Հաստատել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:

3. Հրապարակել մրցույթի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքերում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփուման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործում:
2. Սփուման տարածքը և հաճախականությունը՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան՝ 99.7 ՄՀց, ք. Կապան՝ 93.1 ՄՀց, գ. Շուռնուխ՝ 96.3 ՄՀց, ք. Քաջարան՝ 96.9 ՄՀց, ք. Մեղրի՝ 96.3 ՄՀց և ք. Ագարակ՝ 93.1 ՄՀց:
3. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
 - 1) հայտ (ձևը կցվում է),
 - 2) փաստաթուղթ՝ լսողական մեդիաձառայություն մատուցողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ՝ անդրադառնալով հետևյալ չափանիշներին՝
 - սեփական արտադրության հաղորդումներին,
 - հայերեն հաղորդումներին,
 - բազմակարծությանը,
 - հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորություններին,
 - աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությանը,
 - ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումներին,
 - գործող լիցենզավորված լսողական մեդիաձառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին,
 - 3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
 - 4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
 - 5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
 - 6) էթիկայի կանոնագիր,
 - 7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,

8) մրցույթին մասնակցելու համար 900005164588 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 150 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

4. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

5. Հայտերն ընդունվում են 2022 թվականի մայիսի 23-ից մինչև հունիսի 13-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:

6. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am էլ. փոստի հասցեով:

Հ Ա Յ Տ

**Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման
լիցենզավորման մրցույթին մասնակցելու**

Հայտատուի անվանումը _____

Գտնվելու/հաշվառման վայրը _____

Պետական գրանցման/հաշվառման համարը _____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն _____

Սփռման տարածքը _____

Տեղեկություն հեղինակագործման վերաբերյալ _____

Հաստատում եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածում նշված
սահմանափակումների բացակայությունը:

Կից փաստաթղթեր՝ _____ թերթ:

Հայտատու _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

(օրը, ամիսը, տարեթիվը)